

Կամուրջներ

Մաս 5

Ի՞նչ է ասում Աստվածաշունչը

1. Ոչինչ ավելի կարևոր չէ, քան փոխհարաբերությունները մարդկանց հետ:

«Որովհետև Օրենքը լրիվ գործադրած կլինեն այս մեկ պատվիրանով. 'Մի՛րի՛ր քո ընկերոջը քո անձի պես':» Գաղատացիս 5:14

«... բայց սեր չունենամ, ես ոչի՛չ չարժեմ:» Ա Կորնթացիս 13:2

2. Փոխհարաբերությունները երբեք հարթ ու հեշտ չեն ընթանում, որովհետև բոլորս էլ մեղավորներ ենք:

«Երավ որ երկրի վրա արդար մարդ չ'կա, որ բարի գործի և չ'մեղանչի:» Ժողովող 7:20

«Որովհետև մարդկային բնությունը Սուրբ Հոգու ցանկացածի հակառակն է ցանկանում, իսկ Սուրբ Հոգին՝ մարդկային բնության ցանկացածի հակառակը: Մրանք միմյանց հակառակ են, և այդ է պատճառը, որ դուք չեք կարող ձեր ուզածը կատարել:» Գաղատացիս 5:17

3. Բոլոր խնդիրների արմատը անձնակենտրոն լինելն է:

«Որտեղի՞ց են առաջանում ձեր հակամարտություններն ու կռիվները: Արդյոք ձեր ցանկություններից չէ՞ն, որոնք կռիվ են մղում ձեր մարմնի մեջ: Ցանկանում եք շատ բաներ, բայց չեք կարող ունենալ... և անա կռվում եք ու պայքարում:» Հակոբոս 4:1-2

«Ինչ որ ելնում է մարդու բերանից, նրա սրտի՞ց է գալիս, և ա՛յդ է, որ պղծում է մարդուն:» Մատթեոս 15:18

«Մարդկային գործերը հայտնի են, ինչպես՝ շնություն... թշնամություն, կռիվ, նախանձ, բարկություն, հակառակություն, երկպառակություն, բաժանումներ, չարակամություն, հարբեցողություն... ու սրանց նման ուրիշ բաներ:» Գաղատացիս 5:19-21

«Իսկ եթե այդպես միմյանց վիրավորեք ու բզկտեք, զգո՛ւյ՛շ, դուք ձեզ կկործանեք: Ձեզ թելադրում եմ հետևյալը.- Առաջնորդվեցե՛ք Սուրբ Հոգու, փոխանակ ձեր մարդկային ցանկությունները կատարելու:» Գաղ. 5:15-16

1. Ընդունեմ իմ մեղավոր բնույթը

«Եթե ասենք՝ «Մեղք չունենք», ինքներս մեզ ենք խաբում, և ճշմարտություն չկա մեր մեջ:» Ա Հովաննես 1:8

2. Դիմակայեմ իմ հիասթափություններին իմ կյանքի մեջ

«Աշխարհում դուք նեղություն կունենաք...» Հովհաննես 16:33

3. Կենտրոնանամ երկնքի վրա ունեցած հույսիս

«Մենք մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք ոչ թե նյութական իրականությունների, այլ հոգևոր իրականության վրա, որովհետև նյութական իրականությունները ժամանակավոր են, մինչդեռ հոգևոր իրականությունները՝ հավիտենական: Արդարև, զիտենք, որ այս հողեղեն տունը, որ մեր մարմինն է, և որի մեջ ենք բնակվում, քայքայվելու է. Բայց երկնքում իբրև տուն, ունենք Աստծու կողմից պատրաստված անձեռագործ և հավիտենական մի մարմին:» Բ Կորնթացիս 4:18-5:1

4. Կենտրոնանամ Աստծո շնորհքի վրա, որ տրվել է ինձ

«Ողորմիր ինձ, Աստված, քո ողորմության պես. և քո մեծ ողորմության պես ջնջիր իմ անօրենությունները:» Մաղմոս 51:1

«Եր իշխանությամբ ջնջեց մեր օրինազանցության համար մեր դեմ արձակված դատապարտության վճիռը՝ խաչափայտին մեխելով այն:» Կողոսացիս 2:14

5. Հետևեմ Սուրբ Հոգու առաջնորդությանը

«Քանի որ այս նոր կյանքը Սուրբ Հոգով ենք ապրում, Սուրբ Հոգով էլ առաջնորդվենք: Չլինենք սնապարծ, չգրգռենք իրար, չնախանձենք միմյանց:» Գաղատացիս 5:25-26

«Սուրբ Հոգու արդյունքներն են՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, ազնվություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն:» Գաղատացիս 5:22-23

Հաջորդ Քարոզի Թեման

ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ԿԱՄՈՒՐՋ ՔՈ

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հովիվ Սարո Խաչիկեան